

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ

Թագուհի Սլավիկի Չափանյանի Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի համար ներկայացված «Բյուջետային ծախսային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը:

Բյուջետային քաղաքականությունը, որպես պետության գործառույթների իրականացման կարևորագույն գործիք, մշտապես գտնվել է տնտեսական վերլուծաբանների և քաղաքականություն մշակողների օրակարգում: Ի թիվս բազմաթիվ նպատակների, այն հետապնդում է նաև մեկ հիմնարար նպատակ՝ տնտեսական աճի խթանում, և հետևաբար այն ունի մեծ դերակատարում ավելի երկար ժամանակահատվածների համար տնտեսական աճի ձեռք բերման գործում:

Ժամանակակից շուկերի պայմաններում էլ ավելի է կարևորվում բյուջետային ծախսային քաղաքականության կարգավորիչ ազդեցության չափի բացահայտումը:

2020թ. կորոնավիրուսի և Լեռնային Ղարաբաղում ռազմական գործողությունների ֆոնին ՀՀ-ում արձանագրվեց ՀՆԱ-ի ծավալների նշանակալից նվազում: Ինչի արդյունքում ՀՀ-ում տնտեսական անկումը կազմեց 7.4%, վերջինս հանգեցրեց ՀՀ պետական բյուջեի ծախսային մասի 16.3% ավելացման:

Միևնույն ժամանակ, այդ ընթացքում մի քանի ուղղությամբ փաստացի պետական ծախսերը գերազանցեցին նախօրոք ծրագրավորված ծախսերի մակարդակին: Մասնավորապես, 30%-ով աճեցին առողջապահության ոլորտի ծախսերը, 26%-ով՝ պաշտպանության ոլորտի ծախսերը, 11%-ով՝ սոցիալական պաշտպանության ոլորտի: Այս կրճատումները իրականացան ինչպես նոր միջոցների օգտագործման, այնպես էլ տարբեր ուղղությունների միջև բաշխման նոր հարաբերակցությունների հաշվին: Սա ևս մեկ անգամ շեշտադրեց պետական ծախսային քաղաքականության դերակատարությունը: Միաժամանակ, դա բխեցրեց հիմնարար քաղաքա-տնտեսական երկընտրանք՝ լրացուցիչ ֆինանսական պահանջների բավարարում պարտքային ռեսուրսների ավելացմամբ, կամ գոյություն ունեցող բյուջետային միջոցների կառուցվածքային վերանայում և ռեսուրսների առավել արդյունավետ վերաբաշխում: Վերջինս պետք է ընդգրկի և՛ ծախսերի մակարդակի, և՛ առանձին ծախսերի տեսակների ներգործության հայտնաբերումը:

Մեր երկրում բյուջետային ծախսերի գործառական դասակարգման առանձին հոդվածների ազդեցությունների համապարփակ վերլուծության բացակայությունն էլ պայմանավորում է նման հետազոտության անհրաժեշտությունը:

Ամփոփելով նշենք, որ հետազոտության թեմայի հրատապությունը հիմնվում է Հայաստանի տնտեսական աճի ձևավորման գործում բյուջետային ծախսային քաղաքականության ներգործության գնահատման, դրա էֆեկտիվության վերլուծության և այդ հենքի վրա ծախսային ուղղությունների լավարկման անհրաժեշտությամբ:

Ատենախոսության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է բյուջետային ծախսային քաղաքականության ՀՀ տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության գնահատումը և այդ քաղաքականության բարելավման ուղիների բացահայտումը:

Հիմնվելով գլխավոր նպատակի վրա ատենախոսության մեջ առաջ են քաշվել և լուծվել հետևյալ հիմնական խնդիրները՝

- վերլուծել պետական ծախսերի դասակարգման համակարգերը՝ վեր հանելով դրանց ձևավորման մեթոդաբանական հիմքերն ու կիրառական նշանակությունը,
- դիտարկել բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխառնչության տեսական հայեցակարգերը, ինչպես նաև ամփոփել այս բնագավառում իրականացված էմպիրիկ վերլուծությունների արդյունքները,
- ուսումնասիրել պետական ֆինանսական միջոցների տեղաբաշխման միջազգային փորձը,
- հետազոտել ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականությունը բնութագրող հիմնական ցուցանիշների շարժընթացը,
- վերլուծել ՀՀ տնտեսական վերելքը պայմանավորող հիմնական գործոններն ու դրանց փոփոխությունները՝ հիմնված ՀՆԱ-ի ծախսային և արտադրական եղանակներով հաշվարկվող բաղադրիչների վերլուծության վրա,
- չափել ՀՀ պետական ծախսերի և տնտեսական աճի միջև առկա փոխկապվածությունը՝ տնտեսաչափական մոդելավորման գործիքակազմի կիրառմամբ,
- վերհանել ՀՀ պետական բյուջեի ծախսային կառուցվածքի կատարելագործման և օպտիմալացման հնարավորությունները,
- նախանշել ՀՀ բյուջետային ծախսերի կառավարման գործընթացի արդյունավետության բարձրացմանն ուղղված մեխանիզմներն ու գործնական ուղիները:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը:

Ատենախոսության կառուցվածքը: Աշխատանքը կազմված է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացություններից ու առաջարկություններից և հավելվածներից: Ատենախոսության ծավալն առանց հավելվածների կազմում է 157 էջ:

Ատենախոսության «Ներածությունում» հիմնավորվել է թեմայի արդիականությունը, ձևակերպվել են հետազոտության նպատակն ու խնդիրները, առանձնացվել են ուսումնասիրության օբյեկտը և առարկան, տրվել են աշխատանքի տեսական, տեղեկատվական և մեթոդաբանական հիմքերը, ներկայացվել են ատենախոսության գիտական նորոյթները, հիմնական արդյունքները և գիտագործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին՝ «**Բյուջետային քաղաքականության և տնտեսական աճի միջև կապերի տեսամեթոդաբանական հիմնահարցերը**» գլխում, հեղինակը մանրամասն քննարկել է բյուջետային ծախսերի ընդհանուր բնութագիրը և հիմնական ուղղությունները: Ներկայացվել և քննարկվել է բյուջետային ծախսերի դասակարգումը՝ որպես կարևոր գործիք պետական ֆինանսների կառավարման արդյունավետության, թափանցիկության և հաշվետվողականության ապահովման գործում: Նաև արծարծվել են ծախսերի ըստ գործառույթների, տնտեսագիտական բնույթի կամ ծրագրերի դասակարգումը և նշվել, որ կառավարությունները կարող են ռեսուրսները առավել նպատակային հատկացնել, հետևել բյուջետային քաղաքականության իրականացմանը և բարելավել հանրային ծառայությունների որակը: Ըստ կատարված ուսումնասիրության արդյունքների, եզրահանգվել է, որ արդյունավետ կառուցված ծախսային դասակարգման համակարգը ոչ միայն նպաստում է տվյալների վերլուծությանը և կայացված որոշումների հիմնավորվածությանը, այլ նաև ապահովում է միջազգային համադրելիություն և հաշվետվությունների ստանդարտներին համապատասխանություն:

Հեղինակը մանրամասն արծարծել է երկրի տնտեսության մրցունակության գնահատման մեթոդաբանական հիմնահարցերը: Տեսական և էմպիրիկ գրականության ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրահանգել, որ թեև բյուջետային ծախսային քաղաքականության միջոցով տնտեսական աճը խթանելուն ուղղված հետազոտությունները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, սակայն դեռևս չկա մեկ միասնական մոտեցում բյուջետային ծախսերի տնտեսական աճի վրա ունեցած ազդեցության և չափի վերաբերյալ: Մանրամասն դիտարկվել են նաև տնտեսական աճի և բյուջետային ծախսերի փոխկապվածության տեսական և մեթոդական հիմքերը: Նշվել է, որ ծախսային առանձին բաղադրիչների ազդեցությունը, կախված երկրի տնտեսության կառուցվածքային առանձնահատկություններից, տարբեր հարաբերակցությամբ է արտացոլվում տնտեսական աճի վրա: Հայաստանի Հանրապետության պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում ծախսային քաղաքականության վերանայումն ու օպտիմալացումը, քանի որ առկա հետազոտությունները վկայում են ծախսային բազմարկիչի համեմատաբար ցածր մակարդակի մասին: Սա մատնանշում է, որ ծախսերի ներկայիս կառուցվածքն արդյունավետորեն չի նպաստում տնտեսական ակտիվության վերականգնմանն ու աճին: Առանձին անդրադարձ է կատարվել և ուսումնասիրվել բյուջետային ծախսերի բաշխման միջազգային փորձը: Նշվել է, որ աշխարհում պետական ծախսերի կառուցվածքն ու մակարդակը զգալիորեն տարբերվում են՝ կախված տվյալ երկրի տնտեսական

զարգացման մակարդակից, կառավարման համակարգից, քաղաքական առաջնահերթություններից և ինստիտուցիոնալ կարողություններից:

Ատենախոսության երկրորդ՝ **«ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության և տնտեսական աճի փոխազդեցության գնահատումը»** գլխում, հեղինակը վերլուծել է ՀՀ բյուջետային ծախսային գերակայությունները և դրանց սոցիալ-տնտեսական նշանակությունը: Նշվել է, որ համեմատաբար ցածր մակարդակն արտացոլում է կառուցվածքային անհավասարակշռություն, որը կարող է խոչընդոտ հանդիսանալ երկարաժամկետ կայուն զարգացման տեսանկյունից: Այս գլխում վերլուծվել են նաև ՀՀ տնտեսական աճի կառուցվածքային բաղադրիչները: ՀՆԱ-ի և պետական ծախսերի միջև գոյություն ունի հստակ կոռելյացիոն կապ. բարձր տնտեսական աճի տարիներին սովորաբար նկատվում է բյուջետային ծախսերի աճ, և հակառակը՝ ճգնաժամային տարիներին ծախսերի ընդլայնումը կիրառվել է որպես հակացիկլային միջոց:

Բացահայտվել են նաև ՀՀ բյուջետային ծախսերի և տնտեսական աճի միջև առկա կապերը՝ տնտեսաչափական մոդելավորման միջոցով: Հայաստանում պետական ծախսերի փոքր բազմարկիչը խոսում է տնտեսական աճի ապահովման գործում ծախսային քաղաքականության փոքր դերի մասին, որը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք չեզոքացնում են պետական ծախսերի բազմարկչի էֆեկտը:

Ատենախոսության երրորդ՝ **«ՀՀ բյուջետային ծախսային քաղաքականության կատարելագործման ուղիները»** գլխում, քննարկվել են բյուջետային ծախսերի կառուցվածքի բարելավման հնարավորությունները: Հայաստանում կապիտալ ծախսերը ունեն փոքր, բայց դրական ազդեցություն անվանական ՀՆԱ-ի վրա, ինչը ընդգծում է, որ նման ներդրումները կարող են ժամանակ պահանջել զգալի եկամուտներ ստանալու համար և կախված են այնպիսի գործոններից, ինչպիսիք են ծախսերի կատարման եղանակը և մակրոտնտեսական պայմանները: Ի տարբերություն կապիտալ ծախսերի, ընթացիկ ծախսերի ազդեցությունը ավելի անմիջական է, ինչը բացատրվում է Հայաստանում սպառման սահմանային հակվածության բարձր մակարդակով:

Տնտեսական աճի վրա ազդեցության տեսակետից նախընտրելի է նվազեցնել ոչ արտադրողական ծախսերը, միաժամանակ մեծացնելով արտադրողական ծախսերը: Սույն գլխում քննարկվել են նաև բյուջետային ծախսերի արդյունավետության բարձրացման ուղիները: Այդ ծախսերի արդյունավետությունը ցածր է, ինչը պայմանավորված է ոչ միայն ծախսերի կառուցվածքով, այլև մի շարք այլ գործոններով: Հեղինակը ծախսերի արդյունավետության գնահատման նպատակով մշակել է «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ»:

«Եզրակացություններ և առաջարկություններ» բաժնում ամփոփվել են ատենախոսության հիմնական եզրահանգումները և ստացված արդյունքները:

Ատենախոսության ստացված արդյունքների հավաստիությունն ու դրանց գործնական նշանակությունը

Ատենախոսության առարկան ՀՀ տնտեսական աճի վրա բյուջետային ծախսերի ազդեցությունն է, իսկ հետազոտության օբյեկտը՝ ՀՀ կառավարության կողմից վարվող բյուջետային ծախսային քաղաքականությունը:

Ատենախոսության հիմնական արդյունքներն ու առաջարկությունները կարող են կիրառվել ՀՀ ֆինանսների նախարարության և հարկաբյուջետային քաղաքականության մշակմանն ու իրականացմանն առնչվող այլ պետական մարմինների կողմից, ինչպես նաև ծառայել որպես վերլուծական հիմք հանրային ֆինանսների կառավարման ոլորտում մասնագիտացած փորձագետների համար:

Ատենախոսության գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության գիտական նորույթներն են.

- Կառուցված բազմագործոն ռեգրեսիայի և վեկտորական-ավտոռեգրեսիայի (VAR) մոդելների կիրառմամբ գնահատվել են ՀՀ տնտեսական աճի և բյուջետային ծախսերի աճի փոխադարձ ազդեցությունները, ըստ որոնց կարճաժամկետ ժամանակահատվածում ՀՀ տնտեսական աճն ավելի մեծ դրական ազդեցություն ունի բյուջետային ծախսերի աճի վրա, քան բյուջետային ծախսերի աճը՝ տնտեսական աճի: Միաժամանակ, ընդհանուր բյուջետային ծախսերի մեջ ընթացիկ ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա ավելի մեծ է, քան կապիտալ ծախսերի ազդեցությունը:
- ՀՀ տնտեսական աճի վրա ըստ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի ազդեցության գնահատման արդյունքում բացահայտվել է, որ տնտեսական աճին առավել մեծ նպաստ են բերում կրթության և առողջապահության վրա կատարվող պետական ծախսերը՝ որպես մարդկային կապիտալի զարգացման հիմնական գործոններ:
- Էմպիրիկ հետազոտության հիման վրա բացահայտվել է ՀՀ գործառական դասակարգման բյուջետային ծախսերի առաջնային ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի բաղադրիչների վրա, մասնավորապես, տնտեսական հարաբերություններին ուղղվող ծախսերը դրական են ազդում արտահանման ծավալների, սոցիալական պաշտպանության ծախսերը՝ վերջնական սպառման, իսկ պաշտպանության ծախսերը՝ ներդրումների աճի վրա:
- Մշակվել է «բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթիվ», որը թույլ է տալիս գնահատել և համեմատել բյուջետային ծրագրերի միջոցառումների արդյունավետությունը՝ դրանց համար սահմանված նպատակների և հատկացված ֆինանսական միջոցների կատարողականի համադրման միջոցով:

Ատենախոսության վերաբերյալ մեր կողմից ներկայացվում են հետևյալ դիտողությունները.

1. Աշխատանքի 2.3 բաժնում առաջ քաշված 3 հիպոթեզներից երկուսի ստուգման նպատակով կառուցվել է VAR մոդել: Կարծում եմ մոդելում **լազերի օպտիմալ քանակի հիմնավորումը խնդրահարույց է**, իսկ ընտրված անկախ փոփոխականների ընտրության հիմնավորումը բացակայում է: Սովորաբար, VAR մոդելները չափազանց զգայուն են լազերի քանակի նկատմամբ. եթե լազերը քիչ են, ունենում ենք մնացորդների ավտոկոռելյացիա, եթե շատ են՝ կորցնում ենք ազատության աստիճանները: Իհարկե հեղինակն իրականացրել է մի շարք թեստեր մոդելի օպտիմալ լազերի ընտրության համար և զուտ մաթեմատիկական տեսանկյունից, և՛ մոդելի որակն է բարձր, և՛ լազերի ընտրությունը հիմնավորված: Սակայն, տնտեսագիտական տեսանկյունից լազերի ընտրության և որոշ անկախ փոփոխականների մոդելում ներառման հիմնավորումը բաց է մնացել: Ի մասնավորի, մոդելի արդյունքներով ստացվել է, որ ընթացիկ եռամսյակում պետական պարտքի 1 տոկոս աճը նվազեցնում է տնտեսական աճը 0.46 տոկոսով հենց նույն եռամսյակում: Քանի որ խոսքը պարտքի ներգրավման մասին է, ոչ թե դրա սպասարկման վճարների, զուտ տնտեսագիտական տեսանկյունից նման բան լինել չի կարող (ավելի հավանական է հակառակ պատկերը, սակայն ոչ նույն եռամսյակում): Նույն կերպ չի կարող լինել նաև դեպքը, որ բյուջեի եկամուտների 1 տոկոս աճը ընթացիկ եռամսյակում նպաստի տնտեսական աճին նույն եռամսյակում 0.19 տոկոսային կետով: Կարծում եմ, որ այդ խնդիրն առաջացել է հետևյալ պատճառով, օպտիմալ լազերի ընտրությունը կատարվել է AIC չափանիշով գնահատված (ստացված) մոդելների մնացորդները ստուգելու արդյունքում: Արդյունքում, ընտրվել են ոչ թե այն լազերը, որոնց տնտեսագիտորեն հիմնավորված են, այլ նրանք, որոնց դեպքում մնացորդների թեստերը լավագույնն են:

2. Աշխատանքի 2.3 բաժնում ներկայացված են երկու բազմագործոն ռեգրեսիայի մոդելներ, որոնցով հեղինակը գնահատել է՝ բյուջեի կապիտալ ծախսերի ազդեցությունը անվանական ՀՆԱ-ի վրա (Մոդել 1) և ընթացիկ ծախսերի ազդեցությունը իրական ՀՆԱ-ի վրա (Մոդել 2): Կարծում եմ մոդելներով կատարված գնահատումները մեթոդաբանական առումով խոցելի են, ուստի չեն կարող արժանահավատ լինել մի քանի առումներով.

2.1 Նախ տնտեսագիտական առումով ամբողջը ռեգրեսիոն մոդելով առանձին մասերով բացատրելը, կարծում ենք այնքան էլ ճիշտ մոտեցում չէ: Սովորաբար, նման դեպքերում շատ ավելի ճիշտ է ամբողջին առանձին մասերի նպաստումները հաշվարկել, քան ռեգրեսիա: Նպաստումները հեղինակը հաշվել է և շատ լավ արդյունքներ է ստացել:

2.2 Մոդելներում բացատրող փոփոխականների ընտրությունը բավարար չափով հիմնավորված չէ, որի արդյունքում ստացված գնահատականները չի կարելի արժանահավատ համարել, մասնավորապես. 1-ին մոդելում որպես բացատրող փոփոխական բյուջեի կապիտալ ծախսերը (առանց ընթացիկ ծախսերի) դիտարկվել են ՀՆԱ-ի մյուս ծախսային բաղադրիչների հետ միաժամանակ: Այս դեպքում, մոդելի

գնահատումը չի արտահայտում իրերի իսկական դրությունը (պատկերը աղճատվում է), քանի որ, որպես բացատրվող փոփոխական անվանական ՀՆԱ-ն իր մեջ ներառում է նաև ընթացիկ ծախսերը (հետևաբար ՀՆԱ-ի աճի մի մասն էլ պայմանավորվում է ընթացիկ ծախսերով): Այսինքն, բացատրվող փոփոխական ՀՆԱ-ի որոշակի մասը (առնվազն ընթացիկ ծախսերի մեծությունը՝ ճշտված բազմարկչով) չի կարող բացատրվել ընտրված բացատրող փոփոխականներով՝ հետևաբար այդ մասը մնում է չբացատրված, և այդ մասը վերաբաշխվում է մյուս ազդող փոփոխականների վրա, արդյունքում ազդող փոփոխականների գործակիցները չեն կարող արտահայտել իրականությունը: Նույն պատկերն է նաև 2-րդ մոդելի դեպքում:

2.3 Մոդելներում ներառված փոփոխականների մի մասը բացարձակ արժեքով են, մի մասը տոկոսային փոփոխությունների տեսքով: Արդյունքում, օրինակ Մոդել 1-ով ստացվել է, որ կապիտալ ծախսերի 1 մլրդ դրամով աճը 6 եռամսյակ հետո նպաստում է անվանական ՀՆԱ-ի 0.004 տոկոսային կես աճին: Այդպես լինել ուղղակի չի կարող: Այդպիսի խնդիր առկա է նաև 3-րդ գլխի ռեգրեսիոն մոդելներից որոշներում:

2.4 Մոդել 2-ում բացատրվող փոփոխականը իրական ՀՆԱ-ն է, իսկ բացատրող փոփոխականները անվանական մեծություններ՝ այդ թվում բյուջեի ընթացիկ ծախսերը: Անվանական փոփոխականներով հնարավոր չէ բացատրել իրական փոփոխականը:

3. Ատենախոսության 4-րդ նորույթով հեղինակն առաջարկել է բյուջետային ծախսերի արդյունավետության գնահատման համաթվի հաշվարկման բանաձև, որն, ըստ էության, իրենից ներկայացնում է ծրագրերի արդյունքային և ֆինանսական կատարողականների հարաբերություն: Ընդունելով, որ առաջարկվող մոտեցմամբ կարելի է իրականացնել բյուջետային ծախսերի արդյունավետության ընդհանուր գնահատում, այդուհանդերձ, կարծում ենք, համաթվի հաշվարկման բանաձևը ունի որոշակի բացեր: Նախ, բյուջեից ֆինանսավորվող ծրագրերի արդյունքային կատարողականները շատ հաճախ չափելի մեծություններ չեն և խիստ դժվար է դրանք բերել ամբողջական չափելիության դաշտ՝ նույնիսկ ցուցանիշների մի ամբողջ համակարգի կիրառմամբ, և անհրաժեշտ են խորքային վերլուծություններ իրականացվող ծրագրերի արդյունավետության գնահատման համար: Բացի դրանից, բանաձևում բացակայում են արդյունքների կշռման գործակիցները՝ մեկից ավելի արդյունք ենթադրող ծրագրերի համար: Բայց, շատ ավելի կարևոր է ծրագրերի արդյունքների որակական գնահատումը, օրինակ կարելի է կիրառել սահմանափակումներ, որ եթե փաստացի արդյունքը ցածր է որոշակի կրիտիկական շեմից, ծախսերի խնայողությունը չի կարող դիտվել որպես ծրագրի արդյունավետություն:

4. Ընդհանուր առմամբ, աշխատանքի ընդհանուր տպավորությունն այնպիսինն է, որ բյուջետային ծախսերի, դրանց առանձին ուղղությունների և տնտեսական աճի վրա դրանց ունեցած ազդեցությունների զուտ մաթեմատիկական գնահատումները բավական խորքային են, սակայն դրանց համարժեք վերլուծական բաղադրիչը բավական թույլ է, որի արդյունքում բացահայտված հիմնախնդիրների, դրանց պատճառահետևանքային կապերի, և

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Թագուհի Սլավիկի Չափանյանի «Բյուջետային ծախսային քաղաքականության ազդեցությունը ՀՀ տնտեսական աճի վրա» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերին, ինչպես նաև ՀՀ ԿԳՄՍՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ:

Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

St. Helena

ՀՊՏՀ գիտքարտուղար

